

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՆԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԵԼԵԱՅԻ ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՀԿ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.38-րդ ՀՈԴՎԱԾԻ 2-րդ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՄԱՇՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈ-
ՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝**

Քաղ. Երեւան

18 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանք՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թո-
փուղյանի, Ա. Խաչարյանի, Ռ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ա. Ղազարյանի,

գործով որպես պարասիանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխարհակազմի իրավաբանա-
կան վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համ-
բարձումյանի, նույն բաժնի առաջարար մասնագետ Ռ. Սարդարյանի,

ՀՀ վճռաբեկ դադարանքի ներկայացուցիչներ Լ. Դրմեյանի և Ռ. Մահմուլյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դադա-
րանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Նելսինկյան քաղաքացիա-
կան ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքա-
ցիական դադարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի

Նանրապեսության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ներկայացնելու գործառնության ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 01.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում դիմողի ներկայացուցիչները նպաստակահարմար էին համարել սույն գործի միավորումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Շայասդատնի Նանրապեսության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի հետ՝ նկարի ունենալով քննության առարկայի նույնաբնույթ լինելը: ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննեց առանձին՝ հաշվի առնելով, որ փվյալ իրավահարաբերությունների նույնաբովանդակ լինելով հանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանի երկու պալատներում այս հարցում ձեւավորվել է փարաբնույթ իրավակիրառական պրակտիկա, ինչպես նաև անհրաժեշտություն առաջացավ առավել համակողմանի ուսումնասիրել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալարի կողմից սույն հարցի առնչությամբ ձեւավորած իրավական նախադեպերը: Այդ նկարառումներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2013թ. հուլիսի 4-ին հետաձգեց սույն գործի քննությունը, որոշելով, մասնավորապես, գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով, ինչպես նաև՝ «Նկարի ունենալով, որ քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ դատարական պրակտիկայում դրա են գրեթե փարակերպ մեկնաբանություններ եւ հաշվի առնելով, որ փվյալ հարցի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում լսել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանություններ, ուստի գործի բանավոր դատաքննությանը հրավիրել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան իրավասությամբ օժիրված ներկայացուցչին եւ առաջարկել ՀՀ վճռաբեկ դատարանին ապահովել վերջինիս մասնակցությունը դատաքննությանը»: Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը ՀՀ դատարական դեպարտամենտից պահանջեց նաև՝ «...մեկամսյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալարի՝ 2006 թվականից հետո քննության առաջ, առանց բացառության, բոլոր գործերով ընդունած որոշումների պահմնենները»:

ՀՀ դադարկան դեպարտամենտի կողմից, սահմանված ժամկեպում, սահմանադրական դադարան է ներկայացվել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դադարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալափի կողմից ընդունված թվով 150 որոշում:

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի ներկայացուցիչների քացարությունները, ՀՀ վճռաբեկ դադարանի ներկայացուցիչների պարզաբանումները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դադարավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, այդ թվում՝ նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դադարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալափի կողմից ընդունված որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դադարավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից սպորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դադարական ակտի վերանայման կանոնները» վերդառությամբ 204.38-րդ հոդվածը սահմանում է.

«1. Եթե սույն բաժնով նախադեսված չեն հարուկ կանոններ, ապա նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դադարական ակտի վերանայման վարույթի վրա դարձվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դադարական ակտում դադարանը կարող է չփոփոխել վերանայված դադարական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մաքնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախադեսված հանգամանքներն ըստ եռթյան չեն կարող ադել գործի ելքի վրա:

3. Վերաբնիչ դադարանի դադարական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դադարան»:

Օրենսգրքի 204.38-րդ հոդվածը 26.10.11թ. ՇՕ-269-Ն ՀՀ օրենքի ուժով շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դադարանի 25.02.2011թ. ՍԴՈ-943 եւ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշումներում արդահայրված իրավական դիրքությունում գործում է նոր դադարավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը՝ այսուհետ՝ օրենսգրքի 204.38-րդ հոդվածը:

բոշումները, կարծում է, որ եթե չապահովվի հիշյալ որոշումներով սահմանված կարգը, այն է՝ սահմանադրական դադարանի որոշումը, որով օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ՝ Սահմանադրությանը համապարապիսանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է դրա սահմանադրափակական բովանդակությունը, եւ սահմանադրական դադարանը գրել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ընդհանուր իրավասության դադարաններում գործի վարույթը նորոգելու համար արդյունավելք ազդակ եւ հակասահմանադրական նորմ կիրառած դադարական ակտի բեկանման հիմք չհանդիսանա, ապա ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված անձի՝ «Սահմանադրական դադարան դիմելու իրավունքը» կլինի ոչ իրական, իսկ սահմանադրական դադարանում սահմանադրափակական վեճ նախաձեռնելը կիմաստրագրելի:

Վերլուծելով սահմանադրական դադարանի ՍԴՈ-984 որոշման հիման վրա օրենսգրքի 204.38-րդ հոդվածում կադարձած օրենսդրական փոփոխությունները՝ դիմողը եզրահանգում է, որ դրանք հակասում են սահմանադրական դադարանի՝ վերը նշված որոշման մեջ արդահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ հակասահմանադրական նորմ կիրառած դադարական ակտի վերանայումը պետք է գտնի ունենա ipso facto (փաստի ուժով), որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պետք է հանդիսանա դադարական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փասդը, եւ որեւէ այլ հանգամանք, պայման, փասդ կամ փասդարկ որպես այլ-ընդունակ չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

3. Պարասխանող կողմը գրնում է, որ վիճարկվող իրավական նորմը համապարապիսանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ չբացառելով այն հնարավորությունը, երբ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանքը կարող է ազդած չլինել գործի ելքի վրա, օրենսդիրը, որպես բացատիկ դեպք եւ միաժամանակ որպես նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներով դադարական ակտը վերանայելու բողոք ներկայացնող անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նախագետնել է, որ դադարանը ծանրակշիռ փասդարկների հիման վրա կարող է չփոփոխել դադարական ակտի եզրափակիչ մասը։ Սակայն, վերջինիս գնահապեմամբ, վիճարկվող դրույթով նախագետնելու նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթով՝ օրենսգրքով նախագետնելու կարգով դադարական ակտը կայացնելու եւ վերանայված դադարական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը, ըստ Էռլայան, վերաբերում է միայն դադարական ակտը բեկանելուց հետո

գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Այսինքն՝ եթք վերանայման վարույթի շրջանակներում հասպարվում է նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի առկայության փասդը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն վերանայվող դատական ակտերը: Վերանայման վարույթի արդյունքում դպյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանած ակտը, եթե հասպարված փասդական հանգամանքները հնարավորություն են դալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը և դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպիսով, ըստ պարասիստանողի, նոր երեւան եկած հանգամանքների, ՀՀ սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապարասիստ ակտերի առկայությունն ինքնին չի կարող կանխորոշել գործի ելքը, չի կարող հանգեցնել անձի արդարացման կամ մեղավորության: Այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը և համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչեւ խախտումը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա պարասիստանող կողմը գլուխ է, որ վերանայման վարույթի արդյունքում գնահատելով խախտման բնույթը և դրա ազդեցությունը գործի ելքի վրա՝ պետք է կայացվի նոր դատական ակտ՝ օրենսգրքով նախադասկան ընդիանուր կարգով: Ուստի, ըստ պարասիստանող կողմի, **օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով բացառում է անձի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքները խախտող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը,** համապարասիստանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների և 101-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներին:

4. Սույն գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին. Դիմողը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ճանաչել գեղեկարգության ազադության իրավունքի խախտման փասդը, վերացնել ՀՀ պաշտպանության նախարարի՝ գաղփնագրման ենթակա գեղեկությունների ընդլայնված գերագեւական ցանկի մասին իրամանը և պարտավորեցնել գրամադրելու 10.02.2010թ. թիվ Ե/2010-051 հարցումով գեղեկարգությունը: ՀՀ վարչական դատարանի՝ 23.11.2010թ. վճռով հայցը մերժվել է: Տիշյալ դատական ակտի դեմ ներկայացվել է վերաբննիչ բողոք: ՀՀ վարչական վերաբննիչ դատարանի՝ 16.03.2011թ. որոշմամբ կազմակերպության վերաբննիչ բողոքը մերժվել է, իսկ 23.11.2010թ. վճիռը թողնվել է անփոփոխ:

«Հ» վճռաբեկ դադարանի 18.05.2011թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

«Պետական եւ ծառայողական գաղփնիքի մասին» «Հ» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի՝ «Հ» Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա գործով սահմանադրական դադարանը 06.03.2012թ. կայացրել է ՍԴՈ-1010 որոշումը:

Սահմանադրական դադարանի ՍԴՈ-1010 որոշման հիման վրա «Հ» վճռաբեկ դադարանի՝ 18.05.2011թ.՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ դիմողի բողոքի հիման վրա գործով «Հ» վճռաբեկ դադարանն իր՝ 27.06.2012թ. որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ, որի արդյունքում իր՝ 25.12.2012թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ վերը նշված վճռաբեկ բողոքը:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն առաջադրում է նոր հանգամանքների հիմքով դադարական ակտի վերանայման վարույթի շրջանակներում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմի կիրառմամբ ընդունված դադարական ակտի օրինական ուժի մեջ մնալու իրավական հնարավորության խնդիրը: Այսինքն՝ դիմողը վիճարկում է օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը միայն նոր հանգամանքների, այլ ոչ թե նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դադարական ակտի վերանայման վարույթի դրևանդակությունից, ուստի սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դադարանն օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձնում միայն նոր հանգամանքների հիմքով դադարական ակտի վերանայման վարույթի դրևանդակությունից:

6. «Հ» սահմանադրական դադարանն իր՝ 31 մայիսի 2013թ. ՍԴՈ-1099 որոշման մեջ կրկին անդրադառնալով նոր հանգամանքների ինսփրիվութի սահմանադրափական բովանդակությանը՝ արձանագրել է, որ. «Հ» սահմանադրական դադարանն իր մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-935, ՍԴՈ-943, ՍԴՈ-984/, ինչպես նաև սահմանադրական դադարանի որոշումների կադարման վիճակի վերաբերյալ դադարական հաղորդումներում անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով

դագրական ակտերի վերանայման ինսպիրուտի իրավակարգավորումներին առնչվող հիմնախնդիրներին՝ առաջադրելով այն հայեցակարգային դիրքորոշումը, որ սահմանադրական դագրարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավելու իրացումը պահանջում է սահմանադրական դագրարանի որոշման հիման վրա դագրական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կրա անձին վերականգնելու սահմանադրական դագրարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմափիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դագրարանն իր՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման 7-րդ կետում արդահայքել է հեքեւյալ իրավական դիրքորոշումները. «... սահմանադրական դագրարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դագրական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դագրական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դագրարանը գրնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահավկություններով՝ գովազարությունը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դագրարան, կամ դագրական ակտը բեկանած դագրարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հասպարզած փաստական հանգամանքները հնարավորություն են դադարական առանց նոր քննության կայացնելու նոր դագրական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:

ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դագրարանի ուշադրությունը իրավիրելով սահմանադրական դագրարանի՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման մեջ արդահայքած իրավական դիրքորոշումների եւ միջազգային իրավական մոդեռնումների վրա, ՍԴՈ-1099 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դագրարանը կրկին արձանագրել է, որ «...նոր հանգամանքների հիմքով դագրական ակտերի վերանայման ինսպիրուտի սահմանադրափակական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինսպիրուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ենելով, պահանջում է խախտման արդյունքում դրուժողի համար առաջացած բացասական հետեւանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչեւ իրավախսփումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)»:

Սահմանադրական դադարանը նույն որոշման մեջ հսկակ իրավական դիրքորոշում է արգահայփել առ այն, որ «...սահմանադրական դադարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դադարական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, եւ դադարական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պեսք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը: Ըստ այդմ, դադարական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պեսք է ձեռնարկվեն արդարադադարական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաբնույթյուն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մրած դադարական ակտերի բեկանման պայմաններում: Վերանայման ինսփիրուտը կարող է ծառայել իր նպագրակին միայն այն դեպքում, երբ ապահովվի դպրոցական գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախուման փասդի առկայության պայմաններում՝ հաշվի առնելով նաև սահմանադրական դադարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դադարանի նոր հանգամանք հանդիսացող դադարական ակտում արգահայդրված իրավական դիրքորոշումները:

Նոր հանգամանքի հիմքով դադարական ակտի վերանայումն անխուսափելիորեն պեսք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դադարական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախուման թույլ դրված դադարական ակտի բեկանմանը»:

Ի թիվս դպրոցական մեջ արգահայդրված ու սույն գործի համար կարեւոր նշանակություն ունեցող՝ նշված եւ մի շարք այլ իրավական դիրքորոշումների, Ռ՛ սահմանադրական դադարանն արձանագրել է, որ. «Այն դեպքում, երբ դադարանները կիսուաափեն օրենքի նորմերի պարզապես ձեւական թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաև եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը»: Սահմանադրական դադարանն արձանագրել է նաև, որ. «... իրավաչափի նպագրակ է հերապնդում վեճի առարկա դրույթով նախափեավող լրացուցիչ պահանջը: Այն պեսք է դիրքորոշել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դադարական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմագրիվ պարգադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փասդարկներով հիմնավորում

ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պարզած մակարդակ եւ «ծանրակշիռ փաստարկների մաքնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հսկակեցում, ինչն օրենսդրի եւ դադարական համարժեք նախադեպ սփեղելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՇՀ քրեական դադարական օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՇՀ քաղաքացիական դադարական օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՇՀ Ազգային ժողովը եւ ՇՀ վճռաբեկ դադարանն իրենց իրավասության շրջանակներում պարփակոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ենելով ապահովել բարույթի միագրեաակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դադարական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կիակասի իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության հիմնարար արժեքներին»: Սահմանադրական դադարանը նկատի է առնում այն կարեւոր հանգամանքը, որ փաստարկը «ծանրակշիռ» կարող է լինել, եթե այն ելակերպային ու վճռորոշ նշանակություն ունի համարժեք եզրահանգման համար:

7. Նկատի ունենալով, որ ՇՀ սահմանադրական դադարանը, ինչպես նշվեց, բազմից անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով գործի քննության ինսպիրությունի սահմանադրական բովանդակությանը, կարեւոր է համարում նաև 2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մեր երկրում անհապական դիմումների ներդրման իրավական պրակտիկային անդրադարձը՝ սույն գործով առաջ քաշված խնդիրներին ամբողջական ու հսկակ պարասիան դադու համար: «Սահմանադրական դադարանի մասին» ՇՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելելով՝ ՇՀ վճռաբեկ դադարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի ընդունած վերջին դադարին թվով շուրջ 150 որոշումների համակողմանի ուսումնասիրությունից հետեւում է, որ քննած գործների 92.3 դոկում դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը եւ բողոքները վերադարձվել են: Միայն 7.7 դոկում դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դադարական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն բոլոր դեպքերում որևէ գործով վերջնական դադարական ակտը չի վերանայվել: Դա այն դեպքում, երբ սույն գործով վեճի առարկա հոդվածով /2-րդ մաս/

հարակ սահմանված է, որ նոր հանգամանքներով դափական ակտի վերանայման վարույթի շրջանակներում միայն ծանրակշիռ փաստարկների մաքնանշմամբ դափարանը կարող է **վերանայված դափական ակտի** եզրափակիչ մասը չփոփոխել: Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ փվյալ համապեքսպում խոսքը վերաբերում է միայն **վերանայված դափական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դափական պրակտիկայում:**

Սահմանադրական դափարանը գրնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է եւ ձեւավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա, ուստի դրանց՝ իրավակիրառական պրակտիկայի գնահատման դեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ: Բանն այն է, որ կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինսպիրությունը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայման ինսպիրությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դափարանի համապարասխան որոշման հիման վրա կոնկրետ դափական ակտի վերանայման արդյունքում համապարասխան հիմքերի առկայության պարագայում փվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործով կայացվում է նոր դափական ակտ. որը փարբերվում է փվյալ գործով նախկինում՝ մինչեւ սահմանադրական դափարանի որոշումը կայացված դափական ակտից: Այս համապեքսպում սահմանադրական դափարանն արձանագրում է, որ հարկ է փարբերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» եւ «նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայում» եզրույթները: Այսպես. նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայման վարույթի հարուցումը պեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով **ՀՀ քաղաքացիական դափարության օրենսգրքի** 204.33, 204.36 եւ 204.37-րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դափարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դափարանի՝ **ՍԴՈ-984** որոշման մեջ արդահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դափական ակտը վերանայող դափարանը պարփակուր է **ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլև դրա արդյունքում բեկանել վերանայվող դափական ակտը**, այլապես դափական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը

հակասող եւ անվավեր ճանաչված կամ սահմանադրական դափարանի մեկնաբանությունից փարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայմանը, **ապա այն վերանայվող դափական ակտի բեկանումից հետո դեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա,** ինչով էլ պայմանավորված է վերանայվող դափական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կիսաթարվի կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նոր հանգամանքների հիմքով դափական ակտի վերանայման ինսպիրուվների էությունը: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՍԴՈ-984 որոշման մեջ, դափական ակտը վերանայող՝ վերաբնիչ եւ վճռաբեկ դափարանները **«քաղաքացիական դափավարության օրենսգրքով իրավասու են կամ վերանայվող դափական ակտը բեկանել եւ գործն ուղարկել նոր քննության, կամ վերանայվող դափական ակտը բեկանել եւ փոփոխել:**

8. «Սահմանադրական դափարանի վերոթվարկյալ իրավական դիրքորոշումների համագետագործությունը անդրադառնալով քաղաքացիական եւ վարչական գործերով նոր հանգամանքների իրավական ինսպիրուվի առնչությամբ **«դափական պրակտիկայում սպեղծված վիճակին»**՝ **«սահմանադրական դափարանն արձանագրում է, որ առկա է ոչ միայն հակասական իրավակիրառական պրակտիկա, այլև ակնհայք է, որ շատ դեպքերում նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը մերժվում է այդ ինսպիրուվի սահմանադրափական բովանդակությանը ոչ համարժեք փաստականությունը: Տիպական օրինակ կարող են լինել 2007թ. քննված գործերը՝ սահմանադրական դափարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա նոր հանգամանքների ծագման հիմքով: Այդ որոշման 3-րդ կետով **«սահմանադրական դափարանը գրել է, որ «Հայասպանի Հանրապետության քաղաքացիական դափավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).********

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Հայասպանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարփակիր պայման չնախագրեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադափության արդյունավետության, բավարար մաքչելիության իրավական երաշխիքներ չապահովելու

առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

Նման պարագայում ՌՌ վճռաբեկ դադարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գրնելով, որ սահմանադրական դադարանն իր որոշումը չի փարածել «...այդ որոշման ուժի մեջ մընելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»: Ակնհայտ է, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՌՌ օրենքի 68-րդ հոդվածի՝ մասնավորապես 10, 12 և 13-րդ մասերի պահանջների մեկնաբանության շրջանակներում չեն կարող անփեսվել նույն օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերի պահանջները: Սահմանադրական դադարանի որոշման հետադարձության ինսփիփուրն առաջին հերթին վերաբերում է վերացական սահմանադրական վերահսկողությանը, իսկ անհափական դիմումների հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության դադարական ընթացակարգերն ու առանձնահափկությունները սահմանված են «Սահմանադրական դադարանի մասին» ՌՌ օրենքի 69-րդ հոդվածով: Վերջինիս 11-րդ մասը հղում է կափարում նաև օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերին՝ շեշտելով, որ գրված հոդվածով նշված գործերին առնչվող **բռնոր այլ հանգամանքների** քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառելի են օրենքի 68-րդ հոդվածի նշված մասերի կանոնները: Սակայն, դրանով հանդերձ, անհափական դիմումներով սահմանադրական դադարանի որոշման վերաբերելիության առումով կանոնները հսկակ ու իրավական որոշակիության սկզբունքին համահունչ սահմանված են «Սահմանադրական դադարանի մասին» ՌՌ օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերով: Իրավական երկու ինսփիփուրների /սահմանադրական դադարանի որոշման հետադարձության և անհափական գանգապի միջոցով սահմանադրական իրավունքների պաշտպանության/ իրավական էության ոչ ճիշդ մեկնաբանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դադարանի մասին» ՌՌ օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերով նախափեսված իրավասությեկփների իրավունքները դադարական կարգով պաշփանելու հնարավորությունը:

Մրգահոգիչն այն է, որ հետագայում նույնաես ՌՌ վճռաբեկ դադարանի քաղաքացիական և վարչական գործերով պալարը դարձարկելու դարձալ մերժել է նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը: Դա վերաբերում է ոչ միայն սահմանադրական դադարանի որոշմամբ ՌՌ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ

սահմանելու միջոցով որոշման գործաժամկետման դեպքերին, այլև որոշման հրապարակման պահից հակասահմանադրական նորմն անվավեր ճանաչելու ուժով նոր հանգամանքի ի հայտ գալուն:

Ընդհուած հանդիպում են որոշումներ, որոնք պարզապես դադարական հայեցողության սահմանների ակնհայտ ուղնահարում են: Օրինակ՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկարմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ սահմանադրական դադարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրակիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապարասիստող եւ միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկարմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ, դիմողի նկարմամբ կայացված վերջնական դադարական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»: ՀՀ քաղաքացիական դադարավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածով սահմանված է, որ «**Նոր հանգամանքները** հիմք են դադարական ակտի վերանայման համար, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը գրված քաղաքացիական գործով դադարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապարասիստող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրակիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնարանությամբ»:

Այս դրույթի առաջին պարբերությունը բովանդակային փոփոխության չի ենթարկվել նաեւ 26.10.2011թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությունը գրված դեպքում **իրավունքի իրացման այլ նախապայման չի պահանջում**: Ավելին, մի շարք երկրներում պետքության պարբակորությունն է անձի նկարմամբ հակասահմանադրական նորմ կիրառելու դեպքում նախաձեռնել նրա իրավունքի վերականգնումն ու հետեւանքների հաղթահարումը: ՀՀ դադարական պրակտիկայում վճռաբեկ դադարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալարդ հաճախ վերադարձնում է բողոքը՝ պարզապես արձանագրելով, որ «... վճռաբեկ բողոքում չի հիմնավորվել նոր հանգամանքների առկայությունը»: Այնինչ նոր հանգամանքի առկայությունը գրված անձի դիմումի հիման վրա կամ՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասով

նախագեսված սուբյեկտների առնչությամբ, սահմանադրական դադարանի որոշման փաստն է, որով նրանց նկարմամբ կիրառված նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ կիրառվել է այլ մեկնարանությամբ, ինչը, սահմանադրական դադարանի կարծիքով, չի համապատասխանում դիմումի նորմի սահմանադրահրավական բովանդակությանը: Եթե սահմանադրական դադարանը գործն արդեն իսկ ընդունել է քննության եւ համանման որոշում է կայացրել, ապա այդ որոշումը վճռաբեկ դադարանի պալափն իրավասու չէ կասկածի գործ դնել եւ դարաբնույթ մոփեցումներով խուսափել դրա կադրարումից:

Առանձին դեպքերում ձեւական մոփեցումը հանգեցնում է նրան, որ դադարական ակդում մեխանիկորեն վերաբրադրվում է դիմողի կողմից թույլ դրված սխալը կամ վրիպակը: Օրինակ, 2012թ. հունվարի 11-ի ԵՄԴ/0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է «Հասանական դադարանի 15.11.2011թ. ՍԴՈ-897 որոշման հիման վրա նոր հանգամանքների հիմքով նախկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին եւ բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պարագաներությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը»: Վյահնչ սահմանադրական դադարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին եւ վերաբերում է միջազգային պայմանագրով սպանձնած պարզավորությունների սահմանադրականությանը:

9. Սահմանադրական դադարանը գիտում է, որ դադարական պրակտիկայում անհրաժեշտ գործադրակում պետք է դրվի «Հաղաքացիական դադարավայման հիմքերի միջև: «Հաղաքացիական դադարավության օրենսգրքի 204.32 եւ 204.33-րդ հոդվածներով նախագեսված իրավապայմանների միջև: «Հաղաքացիական դադարավության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը նոր երեսան եկած հանգամանքների դեպքում դադարական ակդի վերանայման հիմքերի մեջ պարբադիր իրավապայման է դիմում նաև այն, որ բողոք ներկայացրած անձը պարտավոր է ապացուցել, որ «...այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չեն կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պարագաներով չեն ներկայացվել դադարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»: 204.33-րդ հոդվածը, սակայն, նոր հանգամանքի առկայության հիմնավորման որեւէ իրավապայման չի առաջադրում, բացի «Հասանադրական դադարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դադարանի համապա-

դրասիան ակտերի առկայությունից: Դա անհրաժեշտ ու բավարար պայման է գործի նորոգման համար: Այլ հարց է, որ նորոգումից հետո ըստ էության **նորոգված գործի քննության շրջանակներում իրավասու դարպարանը պետք է որոշի, թե որքանով է Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումն ազդել քննության առարկա գործի ելքի վրա եւ ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները:** Դրա փոխարեն պարզապես արգելափակվում է անձանց՝ դարպարանի մաքչելիության իրավունքը:

Անընդունելի է նաև այն, որ օրենքի պահանջը կապարելու փոխարեն **«Վճռաբեկ դարպարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալափն առանձին դեպքերում փորձում է «մեկնաբանել» սահմանադրական դարպարանի որոշումները եւ այդ ճանապարհով շրջանցել դրանց պահանջների կապարումը, որպիսի պրակտիկան չի բխում** **«Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 93-րդ հոդվածի պահանջներից»:** Նման պրակտիկայի համար, մասնավորապես, հիմք է ծառայել նաև **«Սահմանադրության եւ «Սահմանադրական դարպարանի մասին»** **«Օրենքի դրույթների յուրովի մեկնաբանությունը»:** Ընդհուպ շրջանցելով սահմանադրական դարպարանի դրվագինալ մոդելումները, արդահայդված նաև **«սահմանադրական դարպարանի ՄԴԱ-1010 որոշման մեջ, **«ՎՃՐԱԲԵԿ դարպարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալափը թիվ ՎՃ/1314/05/10 վարչական գործով 25.12.2012թ. որոշման մեջ գրել է, որ «... վեճը լուծող դարպարանները (ընդհանուր իրավասության եւ/կամ մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայր գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դարպարանի կարծիքով** **«Սահմանադրությանը հակասելը»:** Այս իրավաչափ դարպողությանը հաջորդում է այն հետեւությունը, համաձայն որի՝ «Կոնկրետ դրույթի՝ **«Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դարպարանի գործը քննող դարպարվոր կամ դարպարուների կազմ»** կողմից»:**

«Սահմանադրական դարպարանի մասին» **«օրենքի 71-րդ հոդվածը /մասնավորապես՝ 5-րդ մաս/ նախագետում է, որ դարպարանը սահմանադրական դարպարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է ներկայացնի: Նախ՝ պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմագիկ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ փոյտ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձեւավորվել նորմի սահմանադրականության**

վերաբերյալ դադավորի ինքնուրույն ու համարժեք իրավական վերլուծության արդյունքում: Սակայն դա չի կարող դառնալ դադարքնության առարկա ու դրա ընթացքում՝ «գնահապտման» արդյունք եւ Հայաստանի Հանրապետության անունից ընդունվող դադարքական ակտում ամրագրվի, որ փվյալ նորմը համապատասխանում է կամ չի հակասում Սահմանադրությանը: Դա պարզապես կհակասի ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջներին եւ դադարքական սահմանադրական վերահսկողության նյութական ու դադարքարական նորմերի բովանդակությանը: Կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հնարավոր մրահոգության առկայության ու սահմանադրական դադարանի միջոցով դրա փարագման հնարավորության հանգամանքը մեկնաբանելով որպես այդ նորմի՝ **Սահմանադրությանը հակասելու հանգամանքի գնահապման իրավասություն**, փեղիք կրրվի ինքնիրավության՝ անուղղակի ձեւով սպանձնելով սահմանադրական արդարադապության գործառույթ ու սպեղծելով նաև հետագա իրավական շփոթ: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության անունից ընդունված որոշման մեջ վճռաբեկ դադարանը կարող է «**գնահապման արդյունքում**» իրավական դիրքորոշում արդարայի ու որ փվյալ նորմը համապատասխանում է Սահմանադրությանը, երբ սահմանադրական դադարանը՝ դարձալ Հայաստանի Հանրապետության անունից ու իր սահմանադրական լիազորությունների ու համարժեք դադարքարական ընթացակարգերի շրջանակներում, իրավաչափ ձեւով նույն դրույթը ճանաչում է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Բնականաբար, նման դադարքական պրակտիկա չի կարող ձեւավորվել: Սակայն փասբն այն է, որ վերջին փարիներին շուրջ 60 գործերով քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ դադարանների կողմից փաստացի կիրառված օրենքների դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Դրանցից ոչ մեկի սահմանադրականության վերաբերյալ նորմը կիրառելիս դադարանների մով որեւէ մրահոգություն չի առաջացել՝ անգամ երբ առկա են եղել նաև սահմանադրական դադարան դիմելու միջնորդություններ: Սա ինքնին մրահոգիչ հանգամանք է:

Սահմանադրական դադարանը գպնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դադարան դիմելու հնարավորությունը դադարանների համար պեսք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարբականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մրահոգությունը չի կարող փարապվել հայեցողական մովեցմամբ, որովհետեւ այն պահանջում է «գնահապման» դադարքարական համապատասխան ընթացակարգ եւ դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց

իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախվեն այդ իրավունքները: Դափական պրակտիկան նաեւ ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադապության նկարմամբ վսկահության կորսքի: Ուսպի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինսպիրութիւն գործունակության ու արդյունավելության հետագա բարձրացումն է, այլև, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, **«Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կեպով ՀՀ դափարաններին վերապահված հնարավորության խելամիվ իրացումը»** Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դափարանի մասին» **«Օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրափակական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գրնում են» արդահայփությունը պեսքը է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դափավորի իրավական վերլուծության արդյունք:** Այնինչ «գնահապումը» ենթադրում է համապատասխան դափավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

10. Սահմանադրական դափարանն էական է համարում նաեւ այն հանգամանքը, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դափարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ: Սահմանադրական դափարանը գրնում է, որ օրենսդրությամբ առավել հսկակ պեսքը է սահմանազափվեն վճռաբեկ դափարանի կողմից գործը քննության ընդունելու եւ գործով ըստ էության որոշում կայացնելու դափավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ հսկակեցման կարիք ունի նաեւ «վերջնական դափարան ակտ» հասկացությունը: Այն հաճախ շփոթում են վերադադարականի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դափարան եւ վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դափարան ակտ, ինչպիսի մեկնաբանության հանդիպում ենք **«ՎՃՐԱԲԵԿ ԴԱՓԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԿԱԿԱՆ ԵՎ ՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՊԱԼԱՔԻ ԱՌԱՆԴԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ, ՀԻՆՉ ՎԻԱՍՊԵՏ ՆԱԵՒ ՎՃՐԱԲԵԿ ԴԱՓԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱցՈՒցՅԻ ՊԱՐՊԱՐԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ»**:

Բողոքարկման ինսպիրութիւն ամբողջական իրացումն անհրաժեշտ է դափարական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու համար: Եթե այդ միջոցներն սպառվում են, ապա ի հայտ է գալիս սահմանադրական դափարան կամ **ՄԻԵԴ դիմելու**

հնարավորությունը: **«Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը նախադրեսում է յուրաքանչյուր անձի համար սահմանադրական դադարան դիմելու երեք իրավապայման.**

- երբ առկա է դադարանի վերջնական ակտը,
- սպառվել են դադարական պաշտպանության բոլոր միջոցները,
- վիճարկվում է այդ ակտով իր նկարմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դադարական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ապյանի դադարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Միաժամանակ, **«Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է, որ «Դադարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից»: Սահմանադրաբարձրավական բովանդակությամբ դադարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձեւով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետեւանք: Նման մոդելումից է բխում նաև **«Քաղաքացիական դադարական օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ վերջնական դադարական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ապյանի դադարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաբննիչ քաղաքացիական դադարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը եւ շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դադարական ակտը»:****

«Սահմանադրական դադարանը գիրնում է նաև, որ դադարական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հսկակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

11. Քննության առարկա հոդվածի իրավակարգավորման առարկայի վերաբերյալ, ինչպես նշվեց, **«Սահմանադրական դադարանն իր ամբողջական դիրքուումն արդահայտել է 2013թ. մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշման շրջանակներում: Ենելով իրավակիրառական պրակտիկայի առկա վիճակից, սահմանադրական դադարանը չի գիրնում, որ սույն գործով դիմողի հարցադրումները պայմանավորված են **«Քաղաքացիական դադարական օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաբարձրավական բովանդակությամբ: Հակառակն, այդ հոդվածն իրավունք-****

ների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք է նախադեսում՝ **վերանայված դադա-կան ակտի** եզրափակիչ մասն անփոփոխ թողնել միայն այն պարագայում, եթե ծան-րակշիռ փաստարկների մաքնանշմամբ հիմնավորվում է դա: Սա ինքնին ենթադրում է, որ դա պեսքը է բացառություն լինի՝ պայմանավորված անհերքելի և ծանրակշիռ փաստարկներով: Այս հանգամանքն ընդունվեց նաև պարապահանողի կողմից: Այսուհանդերձ, թերեւս դադական պրակտիկայի համար նորմադիվ պարզաբանման կարիք ունի «ծանրակշիռ փաստարկ» հասկացությունը: Վերջինս ամրագրված է նաև այլ իրավական ակտերում /օրինակ՝ ՀՀ քրեական դադավարության օրենսգրքի 8 և 426.9-րդ հոդվածներում, ՀՀ դադական օրենսգրքի 15-րդ հոդվածում եւ այլն/: Եթե դադական պրակտիկան համարմեք մոդեռում չի ցուցաբերել այս եզրույթի իրավական բովանդակության առնչությամբ, ապա օրենսդիր մարմինը նույնպես պեսքը է համապարապահան հետեւություն անի եւ օրենսդրորեն առավել հսկակեցնի «ծանրակշիռ փաստարկ» հասկացության իրավական բովանդակությունը, քանի որ վերջինս դժվար իրավահարաբերություններում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում անձանց իրավունքների պաշտպանության եւ դրանց անմիջական գործողության սահմանադրական պահանջի իրականացման հարցում: Այսպես, ինչպես նշվեց, էականն այն է, որ դժվար փաստարկն օբյեկտիվորեն պեսքը է կանխորոշիչ նշա-նակություն ունենա համարմեք եզրափակման համար:

Փաստ է նաև, որ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան **հիմնա-կանում շրջանցում է վեճի առարկա հոդվածի պահանջը**: Վրդյունքում՝ նոր հանգամանքների իրավական ինսփիփութի կիրառման դադական պրակտիկան մեծ թվով գործերի առնչությամբ ներդաշնակ չէ մարդկանց իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական պահանջներին: Նման իրավիճակում ՀՀ սահմանադրական դադարանք գիրնում է, որ իրավունքի գերակայության երաշխա-վորման, իրավական պեսքության սահմանադրական սկզբունքին հավագրահիմ լինելու եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներն անշեղ կադարելու համար առանցքային նշանակություն ունի ՀՀ դադական պրակտիկայում իրավունքի գերա-կայության սկզբունքի հետեւողական իրացմամբ թելադրված՝ իրավամբածողության լուրջ բարեփոխումը եւ ՀՀ սահմանադրական դադարանի արձանագրած վերոնշյալ իրավիճակի հաղթահարումը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր նաև երաշխա-վորել ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. ՀՀ քաղաքացիական դադարանության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դադարական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն սահմանադրախրավական բովանդակությամբ, համաձայն որի.

ա/ **նոր հանգամանքի հիմքով դադարական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դադարական ակտի եւ/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դադարական ակտի բնականմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը,**

բ/ Վերանայված դադարական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը վերաբերում է միայն դադարական ակտը բնականելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դադարական ակտին: Խոկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարբադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱԾՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴԱ-1114